

ԵՂԵՎԱՆ ՓՈՂ

7-8

(202-203)
հուլիս-օգոստոս, 2023

ԸՆԴ ԵՂԵՎԱՆ ՓՈՂ ԵՎԱՆԷ ԽԱՆԱՏ



Հուլիսի 12-ին Գյումրու գեղագիտության ազգային կենտրոնում տեղի ունեցավ ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի պաշտոնաթերթ «Եղեվան փող»-ի հորելյանական 200-րդ համարի լույսընծայմանը նվիրված հանդիսությունը, որին մասնակցում էին ՀԳՄ նախագահ Էդ. Միլիտոնյանը, «Վան Արյան» հրատարակչության տնօրեն Վիլյամ Պողոսյանը, շիրակցի գրողներ ու արվեստագետներ, Շիրակի մարզի գրասեր հասարակությունը, թերթի լավագույն բարեկամներն ու մեր մշակույթի երախտավորները:

«Թերևս դահլիճում չկա մեկը, որն ուղղակի կամ անուղղակի չի առնչվել «Եղեվան փող»-ին, որի 200-րդ համարը այսօր մենք թերթում ենք որպես անցած ստեղծագործական ճանապարհի վկայություն»,- ասաց թերթի խմբագիր Ռոզա Հովհաննիսյանը:

Հոգևոր-մշակութային գծա-

պատկերում թերթի դերի ու գործառույթների, անցած դժվարին ուղու մասին խոսեց ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքի նախագահ Անդրանիկ Կարապետյանը շարունակելով, «Այսօր, այս դառը ժամանակներում, նշում ենք «Եղեվան փող»-ի 200-րդ համարի ծնունդը. նոր ու նորանոր մարտահրավերների առաջ կանգնած «Եղեվան փող»-ի, գաղափարական, արժեքային ու ծագումների դեմ կռվելու պատրաստ «Եղեվան փող»-ի...

Ես էլ եմ հավատում, որ մեզ մից հետո եկող գրական սերունդը արթուն կննա և այքի լույսի պես կպահի հողեր այս խրամատը, այս ալպիական անաղարտ տարածքը»:

ՀԳՄ նախագահ Էդվարդ Միլիտոնյանը ընդգծեց, որ «Եղեվան փողը» Շիրակում մեծ դեր է խաղում գրական մթնոլորտի ստեղծման, գրական նոր սերունդի ինքնահաստատման իմաստով, հետևաբար Շիրակը մեր մշակույթի արարման քուրաներից է: Նա ՀԳՄ անդամության տուն հանձնեց երիտասարդ բանաստեղծ Լևոն Բեժանյանին, իսկ Անդրանիկ Կարապետյանին ու Ռոզա Հովհաննիսյանին Հնորիավորագիր թերթի 200-րդ համարի լույսընծայման առիթով:

Թերթի տարբեր տարիների խմբագիրներն անդրադարձան մոտիկ անցյալի պատմական ժամանակներին, երբ նոր-նոր ձևավորվում էր թերթ ունենալու գաղափարը:

90-ականների գրամշակութային կյանքը հատկապես նոր սերունդի համար բացահայտեց թերթի առաջին խմբագիրը բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Գագիկ Խաչիկյանը ընդգծելով, որ թերթը լավագույն քոչչադաշտն է Շիրակի գրամշակութային ու գիտական կյանքի զարգացման համար:

Բանաստեղծուհի Սոնա Անտոնյանը խոսեց ոչ հեռավոր 90-ականների գրական խրամատներում թերթի շուրջ հավաքված նվիրյալների, բանաստեղծ Միքայել ժամհարյանի նախածնունդայն թերթի դժվարին երկունքի, ապա և ստեղծագործական ընթացքի մասին. «Մենք ճանապարհ անցանք քեզ հետ, Եղեվան, ընկանք ու ելանք, կորուստներ ունեցանք, մեր գրչընկերների քաջ մնացած տեղերը քո էջերում արժևորվեցին նրանց արվեստով ու տաղերով»:

Մեր ԵՂԵՎԱՆԸ- ինքնատիպ, խիզախ ու արարող: Այսօր մեր երկրի համար կյանքի ու մահու օրերին, շրջափակված Արցախի համար դժվար պահին, ժամ է 200-րդ անգամ փողը հնչեցնելու ի լուր: Ելիր, կանգնիր, զարթնիր հայ մարդ, հանուն ազգի և ազգային արժեքների փրկության»:

Հաջորդիվ ազատամարտիկ, բանաստեղծ Գագիկ Մարոյանը նշեց «Եղեվան փող»-ի «Առաքինի գրականություն» ստեղծելու հավատածքին հարազատ մնալը բոլոր ժամանակներում:

Ընդգծվեց, որ թերթը շարունակել է հայ ու համաշխարհային գրականության լավագույն գործերը հրատարակել նաև Ղևոնդ բանաստեղծի /Համլետ Մանուկյան/ խմբագրման տարիներին:

ՀԳՄ Շիրակի մարզային բաժանմունքը որպես շնորհավորանք Վկայագրեր հանձնեց թերթի բոլոր տարիների խմբագիրներին և գրականագետ, բան. գիտ. թեկնածու, Կարինե Մարտիրոսյանին, բարգամնիչ Գառնիկ Մելքոնյանին, որպես երախտագիտություն նաև Շիրակի գրական կյանքին մշտապես սատարող բոլոր կազմակերպություններին ու անձանց: «Շիրակ» հայրենակցական միության կողմից թերթի խմբագրակազմը ստացավ Հնորիավորագիր մարզի գրական կյանքը լավագույնս լուսարանելու համար:

Հանդիսության ընթացքում հնչեցին երգեր Երևանի Կոմիտասի անվան կոնսերվատորիայի Գյումրու մասնաճյուղի ուսանող-

ների կատարմամբ:

Գյումրու Մտորումների քառորդի դերասան Գալիթ Մարդոյանը մեծ Վարպետի «Ես ծեզ ասում եմ կգա ոգու սով» բանաստեղծության ընթերցմամբ հին ու նոր մարտահրավերի պես զգոնացրեց ներկաներին:

«Եղեվան փողը» մշակութային լուծ քաշող եզնախաբեր է, ու այսօր մենք լսեցինք յուրօրինակ հորովելներ ի պատիվ նրա: Թող հորովելները վերստին հաստատեն, որ այս հողի վրա ապրելու մի բանածն կա աշխատել ու արարել...»

Հնորիավոր ենք բոլոր հեղինակներին, հողվածագիրներին ու ընթերցողներին, շնորհակալ ենք բոլոր նրանց, ովքեր զորացնում են թերթս, հողս, երկիրս հայրենի»,- եզրափակեց «Եղեվան փող»-ի խմբագիրը:

Նուրնե Լիկողոսյան



Լեոնիդ Անդրեևի «Եղիագար» գիրքը հրատարակվում է Հայ գրականության բարեկամներ Գրանտ Ապոլոյանի և Պարույր Պալյանի հովանավորությամբ, խմբագիր Արզար Ավիհյան:

Պազարոսի հարուստ ավետարանական պատումը միշտ է հետաքրքրել փիլիսոփաներին և գրողներին: Իր հանձարեղ պատմվածքում ռուս մեծ գրող

Լեոնիդ Անդրեևը (1871-1919) ոչ այնքան շարունակում, որքան ուրույն (գեղարվեստական) մեկնություն է տալիս աստվածաշնչյան այս պատմությանը: Պատմվածքն ունի նաև գեղարվեստական ներշնչման կոնկրետ «աղբյուրներ»: Անդրեևը ծանոթ է եղել Եղիագարի (Պազարոսի) գեղարվեստական պատկերման շատ տարբերակների, ուշադիր կարդացել է Ռեմանի «Հիսուսի կյանքը» (1863), Ֆլորենտի «Սուրբ Անտոնի գայթակությունը» (1874), ինչպես նաև ֆրանսիացի պառնասական բանաստեղծ Լեոն Դերկսի (1838-1912) «Lazare» պոեմը: Սակայն Անդրեևի տաղանդի մեծությունը դրսևորվել է հենց հանրածանոթ սյուժեի ինքնուրույն և անկրկնելի մեկնաբանման մեջ:

Պատմվածքը, որից մի դրվագ ներկայացնում ենք ընթերցողներին, հայերեն է թարգմանել տաղանդավոր բանաստեղծ Արա Արթյանը:

Մաս 1

Երբ Եղիագարը ելավ գերեզմանից, որտեղ նա երեք գիշեր և երեք ցերեկ գտնվում էր մահվան հանելուկային իշխանության տակ, և ողջ ու առողջ վերադարձավ իր բնակավայրը, նրա վրա երկար ժամանակ նկատելի չէր այն չարագուշակ տարօրինակությունը, որը ժամանակի հետ նրա անունն իսկ սարսափելի կդարձներ: Դեպի կյանք նրա վերադարձը մերժավորները մի պայծառ ուրախությամբ ու լուսավորությամբ, աներևակայելի սիրով ու հոգատարությամբ ընդունեցին, և կերակրեցին նրան, և խմեցրին, նոր հագուկապով բավարարեցին իրենց անհագ ուշադրությունը: Եվ հազգրին նրան շքեղ, վառվուռ գույներով հագուստներ, հույսով և ուրախությամբ, և երբ նա փնսացուի նման, նորապսակի հանդերձանքով կրկին նստեց նրանց մեջտեղում, կրկին կերավ ու կրկին խմեց նրանց հետ, նրանք արտասվե-

ցին կարեկցանքից ու կանչեցին հարևաններին, որպեսզի ականատես լինեն հրաշալի հարությանը: Եկան հարևանները նրա ծնոթերի երկար մատները, և անձամբ մարդիկ հեռավոր քաղաքներից ու գյուղերից, և հախուռն բացականություններով արտահայտեցին իրենց խոնարհունը հրաշքի առաջ, ճիշտ այնպես, ինչպես մեղուներ են զվվում Մարիամի և Մարթայի տան շուրջը:

Եվ այն նորը, ինչը հայտնվել էր Եղիագարի դեմքին ու նրա շարժումներում, իրավամբ վերագրում էին նրա ծանր հիվանդությանը և կրած ծանր տառապանքներին: Ակնհայտ էր, որ մահվան քայքայիչ աշխատանքը դիակի վրա կանգ էր առել լոկ հրաշագործ իշխանության շնորհիվ, քայք լիովին չէր ոչնչացրել: Եվ այն, ինչ արդեն արել էր մահը դեմքի և մարմնի հետ, քվում էր նկարչի անավարտ գծանկար բարակ ապակու տակ:

Եղիագարի քունքերին, այքե-

րի տակ ու այտերի փոսերում հայտնվել էին հողագույն կապուկներ, և նույն հողագույն կապուկներով էին պատված նրա ծնոթերի երկար մատները, և գերեզմանում աճած նրա երկար եղունգները դարձել էին մուգ արնագույն: Շուրթերի և մարմնի վրա տեղ-տեղ մաշվել պոկված էր, կարծրած, ճաքքված էր ու լայրծուն, ասես պատված լիներ քափանցիկ էմալով: Եվ նա մուսալաղն էր, քիսպոտ: Նրա մարմինը շիրիմում փքվելով, պահպանել էր իր հրեշավոր չափերը, և այդ սարսափելի փքվածության մեջ զգացվում էր գարշահոտությունը: Բայց դիակի ծանր հոտը, որով ներծծված էր Եղիագարի քաղման հագուստը, որը կարծես ծուլվել էր մարմնին, շուտով խպատ անհետացավ, և որոշ ժամանակ անց կակղեցին նրա ծնոթերի ու դեմքի կապուկները և հարքվեցին կարմրավուն ճաքերը, չնայած նրանք երբեք էլ չանհետացան: Այսպիսի դեմքով նա հայտնվեց մարդկանց իր երկրորդ

կյանքում, բայց այն իրական էր թվում նրանց, ովքեր նրան տեսել էին քաղվելիս: Ոչ միայն դեմքը, փոխվել էին Եղիազարի վարքն ու բարքը նույնպես, քնն դա էլ ոչ մեկին կարծես քն չզարմացրեց, և դրա վրա էլ պետք եղած ուշադրությունը չդարձրին:

Մինչ մահը Եղիազարը մշտապես ուրախ էր ու անհոգ, սիրում էր ծիծաղել և անքն կատակներ անել: Չարությունից և մտայնությունից զուրկ, հենց այդ համելի

զվարթության և հավասարակշռության համար էլ նրան սիրում էր «Կարդապետը»: Իսկ այժմ նա մտայն էր ու լրջմիտ, լռակյաց, ինքը չէր կատակում և ծիծաղով չէր արծազանցում ուրիշի կատակին ու ծիծաղին, և այն խոսքերը, որ նա հազվադեպ էր արտաբերում, շատ պարզունակ էին, սովորական և անհրաժեշտ բաներ, նույնքան զուրկ բովանդակությունից ու խորքից, ինչպես այն հնչյունները, որ արտաբերում է կենդա-

նին ցավի և հաճույքի, քաղցի ու ծարավի ժամանակ: Նման բաներով իր ողջ կյանքում կարող է խոսել մարդը, և ոչ ոք չի կարող իմանալ, քն ինչով է ցավում կամ ուրախանում նա իր հոգու խորքում: Այդպես, դիակի դեմքով, որի վրա երեք օր ու զիշեր իջչիս էր մահվան մտայնը, հարսանեկան շքեղ հանդերձանքով, շողշողուն ոսկեվառվով ու արնագույն բուրդով, ծանր լռակյաց, արդեն սարսափազդու, տարբեր և

ատանճահատուկ և ոչ մեկի կողմից չճանաչված, նստած էր նա խնջույքի սեղանին, իր ընկերների և մեթոդիկների միջև: Նրա շուրջը պլիքվում էին մերթ քմերթությունը, մերթ հախուռն, զրնգուն ծայրերը, հիացմունքը, և տաք հայացքները սիրով ու քերթությամբ ուղղված էին նրա դեմքին, որը դեռ պահում էր գերեզմանային լուրջությունը, և ընկերոջ տաք ծեղրը սիրով շոյում էր նրա ծանր, կապտած ծեղրը:

Եվ հնչում էր երաժշտությունը: Գրավիրել էին երաժիշտներին, և նրանք ուրախ նվագում էին: Սրինգ էին փչում, ծնծղա էին զարկում, տավիղ ու բամբիս նվագում ճիշտ այնպես, ինչպես մեղուներն էին զվվում, ինչպես ծղղիղն է երգում, ինչպես բռնուններն են երգում ու ծվվում Սարիամի ու Մարթայի տան վերևում ու շուրջը:

ՉՅՈՒՄՐՈՒ «ԱՄԵՆԱՓՐԿԻՉ» ԵԿԵՂԵՃԻՆ

«Ամենափրկիչ» եկեղեցին, ըստ մի շարք աղբյուրների, կառուցվում է Ալեքսանդրապոլի ծախվորվող կենտրոնում, որտեղ արդեն 1850-ական րվականներին կառուցվել ու գործում էին հայ կաթողիկոսների և հունական եկեղեցիները: 3. Գեղամյանցն իր «Ախալցխայի» մինչև Անի» աշխատության մեջ գրում է «Ալեքսանդրապոլի և ամբողջ փոխարքայութեան մեջ գտնուած եկեղեցիներից ամենամեծը և ամենափառաւորն է Ամենափրկիչը-ալեքսանդրապոլցի հայերի ջերմեռանդութեան ճշմարիտ պարծանքը-չինուած քաղաքի կենտրոնում»:

Ժամկած Անիի խորհրդանշան Կաթողիկոս Մայր եկեղեցին նորից որպես հոգևոր տաճար: «Ամենափրկիչ» եկեղեցու կառուցման համար սկզբում որոշվում է հանգանակություն անել համարություններից և ամբողջ բնակչությունից: Աստվածահաճո գործի համար Եկեղեցու Պրամփյանի (Պրամբնանց) ընտանիքը կրկնապատկում է հանգանակությանը հավաքված գումարը: Կառուցմանը նույնիսկ արգելք չի հանդիսանում այն, որ ընտրված տեղը հունական ու կաթողիկ եկեղեցիների միջև ընկած տարածքը, ճահճոտ էր: Դժվարությունները հաղթահարելու նպատակով որոշվում է եկեղեցու հիմքը խորը փորել և եկեղեցու կառուցման համար ոչինչ չխնայել: Գիմքի փորման աշխատանք-

վում է պարբերական դադարներով, հնարավոր նստվածքներից խուսափելու համար: Գարկ է ընել, որ գյուղացի վարպետները հետևում էին նաև կառուցապատման եղանակային ավանդույթներին, շինարարական աշխատանքներն սկսվում էին Բարեկենդանից ու դադարեցվում նոյեմբերի 15-ին: Այդ պատճառով էլ «Ամենափրկիչ» եկեղեցու կառուցումը տևել է 14 տարի: «1859-1873 տարիների ընթացքում Անույ Կաթողիկե եկեղեցույ ձևով: Եկեղեցին շինողներն են ժՁ դարու հայագրի ճարտարապետներ - Պապիկ Կարապետեան Բարտաշոյեանց և Թաղուս Կարապետեան Անտիկանց - երկու ինքնուս և հասարակ որմնադիրներ, որոնց առանց կարմիրու ես կարող եմ Տրդատ ճարտարապետի (Անույ կաթողի-

Պապոն, Անտիկեց Թաղուսը, Գևուկան (Գուկանենցը) և Կանցունց Խաչունց»:
Մի շարք աղբյուրների համաձայն եկեղեցու շինարարական աշխատանքները ղեկավարել են տոհմիկ քարտաշ-որմնադիրներ վարպետաց վարպետներ Մանուկ Պետրոսյանցը («Արտար» Մանուկ), ուստարաշի Թաղուս Կարապետյանց (Անտիկեանց 1835-1899 թթ.), Պապիկ Կարապետյանց (Բարտաշոյեանց): Բանավոր փոխանցված հիշողությունները պատմում են, որ նրանք հաճախ Ալեքսանդրապոլից ֆայտոնով մեկնել են Անի, առավոտյան արևածագից ուսումնասիրել Մեծն Տրդատի կերտած հողակապ Մայր տաճարը, չափել եկեղեցու կառուցվածքը, սև ամուխով արտանվարել են տաճարի այս կամ այն մասը, վերադարձել ու վարպետների հետ շարել տվյալ մասը մտցնելով նորություններ, և այսպես 14 տարի շարունակ կառուցել Ամենափրկիչ եկեղեցին:

Եկեղեցին ունի 48 մետր բարձրություն, օժտված է եղել ուրույն հատկանիշներով ու հայկական եկեղեցիներից միակն է, որ ունեցել է մետաղական կառուցատարրեր՝ ինժեներական հատուկ լուծումներով մինչև գմբեթը կապված կամարամածներ: «Ամենափրկիչի» ներքին պատերը և առաստաղը սվաղած էին հատուկ շաղախով, որտեղ, կրից բացի, ամրության համար օգտագործված է եղել ուղտի բուրդ: Եկեղեցու ներքին հարդարանքն աչքի էր ընկնում իր յուրահատկություններով: Պատկերակալ խաչկալը զարդարված է եղել սրբերի նկարներով ու փայտյա քանդակագործություններով, և բնի երկու կողմի խորաններից մեկը պատարագի սպասավորության, իսկ մյուսը խաչելության, Աստվածածնի և սրբոց պատկերների համար են եղել, որտեղ արծաթյա սուփի մեջ դրված է եղել կենարար խաչափայտի մասունք, որի շնորհիվ եկեղեցու խորանը միշտ լցված է եղել ուխտավորներով: «Ամենափրկիչի» ճարտարապետական առանձնահատկությունների մասին հետաքրքիր մանրամասներ է հայտնում նաև 3. Գեղամյանցը «Փորձ» համդեսում: Ինչպես վերը նշվել է, քանի որ տարածքը ճահճոտ էր ճմճմա, և հիմքը շատ վատը, այդ պատճառով էլ «Ամենափրկիչը» միակ եկեղեցին է, որի համար կառուցվել է մեծածավալ նկուղային հարկ կամարներով պատերի 4 մետր հաստությամբ: Ներքնահարկը սալարկված է եղել մեծ քարերով, ունի երեք մուտք ու զարդանի օղանցքներ, որոնց դրսի անցքերը աննկատելիորեն ձուլվում են պատի զարդաքանդակներին ու հրեշտակների պատկերներին:



ներն սկսվում են 1858 թ. հավատացյալ ժողովրդի ջանքերով ու մեծ հանդիսավորությամբ դիզված կառուցված տարրեր պատմությունների եկեղեցու հիմքի 6-8 մետր խորությունը փորվել է ձեռքով ու հիմնահողը դուրս է բերվել քաղաքի բարեպաշտ ու հավատավոր բնակիչների, համարությունների և վարպետների ընտանիքների կանանց և աղջիկների զոհողությունով:
Ինչպես ներկայացնում է 3. Գեղամյանցը, «տեղական ժողովրդականներից ասնաֆախանք հերթով ծրիարար աշխատել են սկզբից մինչև վերջ»: Այսինքն հավատավոր ժողովուրդն «Ամենափրկիչի» կառուցումն ընդունել է որպես նվիրական սրբություն, և այդ պատճառով է, որ որոշ քանավոր հիշատակումների համաձայն եկեղեցու հիմքի հողը հիմնարկների արարողությունից հետո, որպես օրինված մասունք հավատքի ու ժով տեղափոխել են այժմյան կենտրոնական զբոսայգի «Գորկի սաղ»:
Բանի որ եկեղեցին ուներ խիստ մեծ չափեր, այն կառուց-

վել շինողի) արժանաւոր յաջողութեամբ համարել:

Գ. Խոջայանց «Արարատ» ամսագրում ևս անդրադառնում է եկեղեցու կառուցմանը. «Նորաշին ավագ եկեղեցին Գայոց (Ամենափրկիչ-Ա.Մ.Ս.) շինվում է Անի քաղաքի Աագ եկեղեցույ նմանութեամբը, զեղեցիկ բանդակագործութիւններով եւ նկարներով, դրոս ներքին եւ արտաքին շինութեանց վերայ ցարդ մեծագումար դրամ ծախս եղած է, եւ յիրաի երեսելի շէք է»: Արտակ եպիսկոպոս Սմբատյանի գրվածքում նույնպես զգալի տեղ է հատկացվել Ալեքսանդրապոլի ս. Փրկիչ եկեղեցու կառուցման պատմությանը. «Այս եկեղեցին հիմնած է 1859 թ. Անիի մայր եկեղեցու հատակագծի և շինվածքի ձևով: Երբ լուսամուտներին է հասնում շինվածքը 1865 թվին կառավարչությունը դադարեցնում է: Այս տեղ Գովսեփ քահանա Կոստանյանի ջանքերով 1867-ին վերսկսվում է շինությունը և 1875 վերջանալով 1876-ին օծվում է Սուքիաս եպիսկոպոս Պարզայանի ծեղրով: Եկեղեցին շինող գլխավոր վարպետները եղել են Շարոշնիկով ուստա

«Պետը է ընել, որ «Ամենափրկիչ» եկեղեցին, ինչպես նաև Շիրակի ճարտարապետական դպրոցի շատ կառույցներ, կրում են Անի քաղաքի միջնադարյան կոթողների ազդեցությունը, սակայն «Ամենափրկիչը» Անիի Մայր տաճարի կրկնությունը չէ, ինչպես որ շատերը կարծում են: Եթե անգամ գյուղացի վարպետների մտահղացմամբ վերարտադրվում էին Անիի Մայր տաճարի ձևերը՝ «համաձև կարողիկին Անույ», ապա կառուցման ընթացքում մտցվել են շատ նորամուծություններ: Նախ «Ամենափրկիչ» եկեղեցին իր չափերով ավելի մեծ է Անի Մայր տաճարից, սև ու կարմիր տուֆի համադրությամբ շարված պատերը մշակված են ստվածաշնչային քեմաներով քաղմաքիկ հարթաքանդակներով: Եկեղեցու արևելյան ծակատից կան երեք մեծ լուսամուտներ, որոնցից երկուսի կարծրագույն քարերի վրա փորագրված են առաքյալների պատկերներ, որից 6-ը մի կողմում է, իսկ մյուս 6-ը՝ մյուս, և դրանց վերևում Փրկիչը: Այս երկու լուսամուտների միջև կան երկու մեծ խաչեր Անիի ավագ եկեղեցու խաչերի օրինակով, որոնք շքեղ ժաղիկներով են քանդակված: Գարավաչին պատի դուրը շինված է զեղեցիկ կարմիր քարից կամարակապ ողկույզածև քանդակներով, որից բարձր լուսամուտի աջ ու ձախ կողմը կարմիր քարից քանդակված են Գործիչը և Սիջայել հրեշտակապետների քանդակները: Այս պատի վրա կան մի արևի ժամացույց: Եկեղեցու արևմտյան պատի նեղ լուսամուտների աջ կողմը կարմիր քարից քանդակված է «Ա. Յարութեան» պատկերը, իսկ ձախ կողմը Գամարածման պատկերը:

Որ «Ամենափրկիչ» եկեղեցին իր ծավալատարածական հորինվածքով կղանար քաղաքի գլխավոր հրապարակի գերիշխողը, դա չէր միայն Թաղուս Անտիկեանի, Արդար Մանուկի և այլ տոհմիկ վարպետների հիմնական նպատակը: Մեր կարծիքով, եկեղեցաշինության խնդիրը միայն կառույցի չափի ու ձևի մեջ չպետք է որոնել: Այստեղ մի ավելի վեհ խորհուրդ կար, քանի որ Աստվածահաճո գործը տանում էր դեպի «մեծափառ Կաթողիկե ի մայրաքաղաքս յԱնի»: Պատահական չէ, որ Արդար Մանուկը որպես գյուղացու հավաքական կերպար, դեռ ավելի վաղուց, քան Վիեննայի համալսարանի արվեստագիտության ամբիոնի պրոֆեսոր Իոսիֆ Մարտիզովսկին, «զիտեր» «Արևմուտքի տեսասնկուսից (Անիի Մայր) տաճարը հանդիսանում է հայ ճարտարապետության ամենաարժեքավոր նվաճումը»: Ինչպես Արդար Մանուկը, այնպես էլ բոլոր գյուղացիներից որպես ջրիստոնյա բարեպաշտ բնակիչներ, համոզված են եղել, որ Անին բացառիկ դեր է կատարել մեր ժողովրդի հոգևոր կյանքում և որպես կաթողիկոսական արեոսանիտ քաղաք, և որպես «հոգևոր մայրաքաղաք»: «Վայարեբերեք և Սառի հետևյալ խոսքերը, «Անին Շիրակի, մասնավորապես Անիի մշակույթի դարաշրջանը բնութագրող հուշարձանների և առարկաների յուրօրինակ բանգարան է»:
Թորոս Թորամանյանը նույնպես մեծ հպարտությամբ է խոսում այդ ժառանգությունը կերտող ժողովրդի մասին. «Թե ինչպես կարողացել է հազիվ երկու միլիոնի հասնող փոքրիկ Շիրակի ժողովուրդը այսօրվա քաղաքակիրք աշխարհի զարմանքն ու հիացումը զրավելու աստիճան փառավոր ու անջնջելի հետքեր թողուլ»: Եվ այդ «փոքրիկ Շիրակի ժողովուրդը» գյուղացի ժառանգորդներն էին, որ պիտի մտահղանային վերակենդան կոր-

դադրել է մասնագիտությամբ հյուսն, սակայն ճարտարապետության հարցերում չափազանց գիտակցված Պետրոսյանը: Հավաքված բազմահարկ հավատարմագրված ժողովրդին զարմանք է հարուցել, քե ինչպես է կարողացել վարպետ Մանուկը 3 մետրանոց ու վեց փթանոց արծաթաքրած պղնձյա մեծ խաչը հնարամտորեն վերև բարձրացնել և ամրացնել «Ամենափրկչի» զմբեթին: Բարեպաշտ գյուրեթեցիները մեծ զուսուր են հանգամանակած լինում, և ականատեսների հուշապատումների համաձայն, երբ վարպետ Մանուկը խաչը տեղադրելուց հետո ներքև է իջնում, խաչիների վրա հավաքված այդ զուսուրից միայն տասը ռուբլի է վերցնում իր կատարած աշխատանքի համար և ասում, որ մնացած զուսուրը բաժանեն աղքատներին: Երախտագետ ալեքսանդրցիները խաչը հաջող ամրացնելու և քրիստոնեական արարքի համար Պետրոսյանց Մանուկին տալիս են «Արտար» պատվանունը: Այդ մասին նշված է նաև Արտակ եպիսկոպոս Սմբատյանի գրվածքում: «Չանգակատան և զմբեթի խաչը յուր տեղն է դրել ուստա Մանուկը՝ «Արտար» մականունով»:

«Արտար» Մանուկի շիրիմը գտնվում է Գյուրեթի քաղաքային հին գերեզմանոցում, և տակաճաքարի վրա փորագրված է.

«ԵՍ ԵՄ ԾԱՌԱՅ ԱԾՈՅ
ՃԱՐՏԱՐԱՊԵՏ, ԵԿԵՂԵՑԻՔԸ
ՇԻՆՈՂՆ ԵՎ ԽՉՔԱԼՆԵՐԸ
ԶԱՐԴԱՐՈՂ ՎԱՐՊԵՏ
ՄԱՆՈՒԿ ՊԵՏՐՈՍՅԱՆՑ

Վ. 1909 թ. ՆՈՅԵՄ. 15-ԻՆ»:

1871 թ. եկեղեցու կառուցումն ավարտվում է: Պետերբուրգից հրավիրվում են երկու ճարտարապետ, որոնք, տեսնելով եկեղեցու հսկա չափերը, 4 սյուների վրա հենվող հսկայական զմբեթը, համարձակ թռչեցնելով կամարները և իմանալով, որ կառուցող գլխավոր ճարտարապետը մասնագիտական կրթություն չունի, վախենում և վտանգավոր են համարում եկեղեցու օգտագործումը: Եկեղեցին կնքվում է: Իր տանջանքների ու զոհանքների պատկերն իր աչքի առաջ ունեցող հուսահատ ժողովուրդը ոչնչի առաջ չի կանգնում եկեղեցին նորից ստուգելու համար: Ալեկ-Պոլ են հրավիրվում անգլիացի ճարտարապետի, որ այդ ժամանակ գտնվելիս է եղել Կովկասում: Եկեղեցին ուսումնասիրելուց հետո նա

գտնում է, որ այն կարող է դիմաճալ թվով ինը և ավել բալ երկրաշարժի: 1877 թ. եկեղեցին օծում են, և որպես կառուցող արհեստավորների պարծանք, այն ոչ մի վնաս չի կրել 1926 թվականի 8.5 բալ երկրաշարժի ժամանակ: Եկեղեցու շինարարական աշխատանքներին զուգընթաց կառուցապատվում էր նաև նրա հարակից շուկա-հրապարակի «տունավաճառի» շրջակայքը. «Եկեղեցույ արևելեան կողմում շինուած են մի կարգ նորաշէն և զեղեցիկ եկեղեցապատկան կրպակներ, մտադրութիւն կայ շինել նոյնպիսի կրպակներ և եկեղեցույ հարաւային, և հիւսիսային կողմերում ծծուած բաց տարածութիւնների վերայ»:

«Ամենափրկչի» եկեղեցին կառուցումից հետո ենթարկվել է շատ քիչ փոփոխությունների, և միայն եկեղեցու հյուսիսային ճակատին կից 1882 թ. Չիթոզյան ընտանիքի միջոցներով կառուցվում է մի փոքրիկ գավիթ՝ «Յիշատակ Չիթոզեանց 1882 ամի»: Չիթոզյանները եկեղեցուն նվիրել էին նաև ոսկյա թելերով ասեղնագործ թավշյա մուգ-կարմիր վարագույր: Ամենափրկչի եկեղեցին ոչ մի վնաս չի կրել նույնիսկ 1926 թվականի ուժեղ երկրաշարժի ժամանակ:

Խորհրդային իշխանության ժամանակաշրջանում, ավելի ճիշտ, անաստվածության տարիներին արդեն 1930 թ.-ին, եկեղեցին փակվեց, իսկ 1932 թ. փորձել են տանկերի միջոցով երկաթե շղթաներով զցել եկեղեցու թմբուկը, որը նրանց չի հաջողվել:

1937 թ. լենինականցիների աչքի առաջ պայթեցվում է Ամենափրկչի զանգակատունը: Հետագայում 1960-ական թվականներին, Լենինական քաղաքի գլխավոր ճարտարապետ Ռաֆայել Եղոյանի կողմից վերականգնվեց եկեղեցու զանգակատունը: Ամենափրկչից սկզբում օգտագործվեց որպես բանգարան, իսկ ավելի ուշ վերածվեց դասական երաժշտության համերգասրահի ֆիլիալի մոնիայի:

Տավոթ, 1988 թ. ավերիչ երկրաշարժի ժամանակ չփրկվեց նույնիսկ Ամենափրկչից, և խոնարհված եկեղեցուց կանգուն էին մնացել միայն արևելյան հատվածն ու զանգակատան արևմտյան պատաշարը: «Ամենափրկչի» եկեղեցին երկար ժամանակ չէր վերականգնվում, և ուզում էին դարձնել երկրաշարժի հուշարձան ծածկելով այն սպակայ սարկոֆագով: Սակայն գյուրեթեցի-ալեքսանդրցի-լենինականցի, նույնիսկ կրելով ահավոր

երկրաշարժի անասելի զոհանքները, կրկին հավատարիմ մնալով նախնայաց հոգևոր ուխտին լծվեց Ամենափրկչի վերակերտման սուրբ գործին: Եկեղեցու վերականգնման համար կատարվեցին հանգամանկություններ ժողովրդի և բարերարների կողմից: Վարպետաց վարպետների ավանդույթը շարունակելով ճարտարապետ Ռաֆայել Եղոյանի գլխավորությամբ «Ամենափրկչից» սկսեցին վերականգնել՝ հնարավորինս օգտագործելով խոնարհված եկեղեցու քարերը: Ամենափրկչի վերակերտման սուրբ գործի նախաձեռնողը եղավ Գյուրեթի նախկին քաղաքապետ Միքայել Վարդանյանը, իսկ խոնարհված եկեղեցու վերակերտման աշխատանքներն ավարտին հասցնելու նպատակով աստվածահաճո ներդրումը կատարեց Գյուրեթի նախկին քաղաքապետ Վարդան Ղուկասյանը:

2014 թ. հունիսի 21-ին արտաքին տեսքով ամբողջությամբ վերականգնված եկեղեցու զմբեթին ու զանգակատան վրա տեղադրվեցին օծված խաչեր:

Ավետիք ՄԵԼԻՔ-ՍԱՐԳՍՅԱՆ
«Շիրակի պատմամշակութային հուշարձանները» գրքից

ՄՐԲԱԶԱՆ ԴՈՂ

Ծնվել են 2004 թվականի հունվարի 19-ին Գյուրեթի քաղաքում: Կրթություն են ստացել Գյուրեթի քիմիկոսի ինժեներական դպրոցում, ապա կրթությունն շարունակել են ՇՊՀ-ի ավագ դպրոցում: Այժմ սովորում են ԵԹԿՊԻ-ի Գյուրեթի մասնաճյուղում, Կինոարվեստ բաժնում:

Ստեղծագործել սկսել են տասը տարեկանից, տասնհինգ տարեկանից գործերն հրատարակվել են առցանց հարթակներում, իսկ 2023 թվականին առաջին անգամ տպագրվել են:

2023-ին մասնակցել են «Արարատ Մկրտումյան» հիմնադրամի սահմանած ամենամյա հանրապետական, զրական, երիտասարդական մրցանակաբաշխմանը՝ արժանանալով խրախուսական մրցանակի:

Թիթեռի կյանքի պես երկար է տևում բանաստեղծությունս
ու կախ ընկնում առաջին ծաղիկի վզից...
Այնքան հեշտ է գրելն այսքան տխուր բաների մասին ու չլացել ու չլացել թիթեռի նման ու չտրվել թռչեցների ու չընկնել դեռ նոր թռած...

Այնքան հեշտ է գրել բարդ լինելուս մասին ու այնքան դժվար լինել այդքան բարդ ու գլխապտուտի նման պատեցնել թիթեռներին ծաղիկի շուրջ ու ստիպել լաց չլինել անզորությունից ու չընկնել ու չընկնել դեռ նոր թռած...

Իմ կյանքի պես

կարճ է տևում թիթեռի կյանքը ու քաքնվում մահճակալի տակ, որտեղ պիտի հրեշներ լինեին, որովհետև մեկը բաց է թողել ոտքի մատը

Հրեշի ոտքի մատի նման երկար է տևում կյանքս ու փորձում լաց չլինել մահճակալի տակից ու չելնել ու չելնել...

Անկյունում մոռում է պարապ մուրացկանը, որի հագուստին հեթանոս աստվածների շուրջն է կարված, ու թեզանիքներին նստած են արալեզներ, որոնք սպասում են քո արարմանը:

Չեմ գարմանա, եթե օրորոցում մի օր մանկանց փոխարեն օրորվեն բարի կրակներ, ու կրակներից հեթանոս սրտով ծնվես դու ու զոհասեղանին հանես սիրտդ և նվիրես արալեզներին:

Ու կենտրոնում կմռռա վերջին արալեզը, ու մ կպարտվի անգամ Տանտալը ու զոհ կգնա իր փառքին օդում կախված ունենալով սիրտդ...

Վերջերս վայրի, անմշակ սևահող եմ, որ իր մեջ գունավոր ծաղիկներ է աճեցնում ու չի թողնում

հուռթի դաշտերը տեսնեն, որոնք իրենց մեջ փտած ցորեններ են պահում, որ երբեք հաց չեն դառնա...

Վերջերս վայրի թռչուն եմ, որ թևերը նոր է գտել ու զրկել ազոպներին կոկոռից ...

Վերջերս միայնակ աշխարհ եմ, որ ապրում է աշխարհում, որը չի սիրում աշխարհներ այլ...

Վերջերս էլ ես չեմ, վայրի թռչուն եմ...

Ես ես եմ...

Փոքր էի, երբ առաջին անգամ ընկա աստիճանից ու փոքր-ինչ քերծվեց ծունկս. այդ օրը առաջին անգամ վերքի համար շոկոլադ նվեր ստացա, ու վերքը կարծես սիրելի դարձավ հիմա ամեն օր եմ ընկնում ամեն պատահած մայրից, բայց ծնկներիս վերքեր չկան, ու ամենաշատը ունեմ կարիքը շոկոլադի

Կարոտից թռչուններ են ծնվում սրտումս ու ճոճվում մազերիցս այնքան ժամանակ, մինչև հասկանում եմ, որ դաշտի հասարակ ու քամու ուղղությամբ ճոճվող մի խրտվիլակ եմ, որի ներսում երբեմն բարախում է մի սիրտ ու շատ հաճախ մոռանում ցախ մատակարարել ուղեղին

ու ուրիշների պարտականությունները չքսել պատերին ու մոռանալ ցավի մասին:

Կարոտից գարուններ են անցնում իրար հերթ չտալով ու իրար ոտքի տակ տալով, քամին երբեմն դադարում է օրորել խրտվիլակի սիրտը, ու ամեն անգամ թվում է՝ գարուններն էլ չեն գա, բայց մի սիրտ դեռ բարախում է երբեմն...

Որք խմբի համերգի ես նման... ափսոս, տոմս չունեմ, ու անորակությունների դարը արագավազ միով ընկել է հետևիցս, իսկ ես խնջություն ընկերն եմ, ախր ես բալլադների հնչյունների ներքո եմ ծնվել ու փախել ծննդյանս երգերից, որ քո երգը լսեմ, որ քառտիկ մտքերս երգ դառնան, բայց չկարողանամ երգել ու ստիպված բակի շուն դարձնեմ դրանց ու կապեմ դոմսս մոտ, որ ինձանից հեռու չգնան...

Որք խմբի ես նման, բայց, ափսոս, այլ երգողների չես հանդուրժում կողքիդ...

Որք գրողի ես նման ու մոռացել ես, որ երգելուց առաջ գրում եմ...



ԷՌԻՏՍԱ
ԳԱԼՍՏՅԱՆ

Ես ուզում եմ դեմքով ճանաչել երջանկությանը կամ թեկուզ մազերով, այնքանով կամ զոհե կտրված ականջով, բայց ինձ ոչ ոք չի պատմել նրա մասին, քուրդը լուրն են պատմելիս, գուցե դեմք չունի գրողի տարածը ու գուցե թափանցիկ է կամ անզույն:

Գուցե դոան հետևում սպասում է, որ ներս կանչենք իրեն, կամ էլ ինչ-որ մեկը կարոտում է նրան, իսկ կարոտվողները էլ երբեք չեն վերադառնում:

Գուցե դրսում նստած դողում է, ու ինքն էլ երջանիկ չէ ու սպասում է երջանկությանը՝ չիմանալով, որ ինքն է իր երջանկությունը:

Ես ուզում եմ բացել դուրը ու ասել, -Ներս արի, ես ուզում եմ ճանաչել քեզ...



և հարազատների ակտիվ մասնակցությամբ: Ելույթ ունեցողները կարևորեցին զրքի լույսընծայումը հատկապես մերօրյա ժամանակներում ընդգծելով դավոյանական խոսքի գեղարվեստական ազդեցությունը համայն հայոց կյանքի վրա:

Գիրքը քաղկացած է երեք հատվածներից. որոնք Դավոյանը գրել է իր կյանքի տարբեր փուլերում: Բանաստեղծի ցանկությունն էր պոեմի երեք հատվածները հրատարակված տեսնել մեկ գրքով, և այս հրատարակությանը նրա ցանկության իրագործումն է:

ԿԱՅԱՄՈՒԻ ԿՈՐԱԻՑ

Վերջին տարիներին Ռազմիկը հաճախ էր խոսում «Ռեքվիեմ»-ի ամբողջական հրատարակության մասին: Ամբողջական ասելով, իհարկե, նկատի ուներ Սեբո խանգաղյանի առաջարկումով 1969 թ. հրատարակությունը, 1996-ին ավարտած և առաջին անգամ 1997-ին հրատարակված երկրորդ մասը և «Ի հավելումն «Ռեքվիեմի» Միեր» հատվածը (2016 թ.), որը տեղ գտավ 2020

թ. հրատարակված իր վերջին «Մենք ունենք նոր անտիպ բանաստեղծություններ» ժողովածուում:

Նա անգամ գիտեր, թե ինչպիսին պիտի լիներ զրքի ձևավորումը, ուզում էր, որ այն կրկին լույս տեսներ առաջին՝ 1969 թ. ձևավորմամբ: Այս հրատարակությունը հեղինակի ցանկության իրագործումն է: Առաջին անգամ «Ռեքվիեմ»-ը հրատարակվում է ամբողջությամբ Սեբո խանգաղյանի առաջարկով և էմիլ Պետրոսյանի ձևավորմամբ: Անշուշտ, հատուկ լիարժեք չէր կարող լինել առանց հեղինակի խոսքի, այդ իսկ պատճառով գրքում ներառված է նաև բանաստեղծի 1997 թ. հրատարակության համար գրած առաջարկը:

1969 թ. հրատարակությունը ամենախիստն է զրաբնության ենթարկվել, այստեղ շեղումներն ակնհայտ են առաջին իսկ տողերից: Բնականաբար, հետագայում շտկումներ եղել են. բայց գիրքը կազմելիս ելակետ են ընդունել 1997 թ. հրատարակությունը, քանի որ այդ ժամանակ հեղինակին կաշկանդող որևէ սահմանափակում չկար: Սակայն այստեղ ևս

հանդիպում են բացթողումներ, և քանի որ ստեղծագործության առաջին հատվածի ձևագիրը դեռ վաթսուհին քվակաճանդին է անհետացել, որոշ համեմատական աշխատանքի անհրաժեշտություն առաջացավ, հնարավորինս անաղարտ տեքստ ունենալու համար:

Պահպանվել է նաև հեղինակի կետադրությունը՝ աննշան փոփոխություններով: 1997 թվականին «ողջերի համար» գրված «Ռեքվիեմ»-ի առաջարկը Ռազմիկն ավարտում է հետևյալ տողերով. «Անցած երեսուն տարիներից մարդկության հիվանդություններն ու ախտերը նվազելու փոխարեն բազմապատկեցին: Դա ցավալի է և մտահոգիչ նոր հազարամյակի շեմին: Մարդկային, ազգային և անձնական անսպասելի տրեղաբույություններից ծնված այս չվերջացող «Ռեքվիեմ»-ը, վստահաբար, այսօր էլ պիտի ունենար իր բնական շարունակությունը...

Արմինե ԹԱՄՐԱԶՅԱՆ-ԴԱՎՈՅԱՆ
2022 թ.

«Ռեքվիեմ»-ից

ԱՐՏԱՇԵՍ ԱՏՈՍ



... ԱՇԽԱՐՀԸ ԻՆՉ ԳՄԱՐ ԳՈՐԻ ԱՐՄԱՍ Է ԿԱՍ ԼՈՒՅՍԻ ԿԱՄԱՐ

Արտաշես Ատոմ

Դու եկար, // Եվ ես երբ հանդարտվեցի, հայացքս ժպտաց, // Քեզ հասկացրեց՝ երազ ես, հուշ ես... // Այնպես մի՛ արի, որ ես ծառս եղած // Ցավ չապրեմ նորից, իմ մեջ արդեն կաս, // Սեր իմ հավերժված...»:

Սեր, որ մի տեսակ այլ արտահայտություն ունի հեղինակի մոտ հետաքրքիր, ներսային-խորքային ասես. չէ՛ որ սերը երկար խոսել չի սիրում: Գեղինակի իսկ միտքն է, և ճիշտ այդ սկզբունքով էլ առաջնորդվում է նա ամբողջ գրքում: «Իմ ապրած օրը // Միշտ ձեռագիր է փակվող ուշ ժամին, // Իմ բացվող օրը սկսվում է // Առավոտի հետ երկ-խոսությամբ»: Իսկ լույսն ու մասնավոր առավոտը այնքան գերակշռում են նրա տողերում: «Առավոտները քեզ մոտ են գալիս, // Երբ արթնանում են քնից ես մաս-մաս, // Ինձ հավաքում են, առավոտ բարի, // Ինձ նման, քեզ նման, բոլորի...»:

Սեր, մայրական սեր, կինը, սերն առ կինը, կարոտ կորցրած-որոնածի նկատմամբ: Իսկ էջերը ապրված են՝ իրական հիմքով ու զգացմունքով իհարկե: Մեծ հաշվով, սա կորցրած սիրո երգն է՝ մաքուր, անաղարտ, պարզ և առանց ավելորդ գունազարդումների:

Իմ պատուհանից լույսի հետ մեկտեղ // Մի ծիտ է գալիս խոտը կտուցին, գուցե ուզում է բո՛ւյն չինել այստեղ, // Ոչ որ չլինի իր լույսից բացի»: Կամ «Արևը մտել պտուղի ներսը, // Ինքն էլ չգիտեր, թե ինչ է փնտրում»:

Կյանքի ու սիրո մայրամուտի ինքնատիպ նկարագրություն, այն էլ՝ մի քիչ խեղճավարի: Եվ այս ամենը միայն մեկ գործում չէ, մեկ անգամ չէ. քվիում է ամբողջը մեկ շնչով է, զգացմունքի ու զգացումի նույն ոգով: Գործերը գրված են տարբեր ժամանակներում, բայց և ասես մշտապես էլ նա իր այգաբացի, արևելքի փնտրությունների մեջ է անկախ ժամանակագրությունից, երբ գուցե հուսահատությունը, սեփական դեպի մայրամուտ զնա-

լու միտումը դեռևս այդքան էլ ակնբայն և հստակ տեսանելի չէր կարող լինել: Եվ այնուամենայնիվ, ավարտը, որ բոլոր գործերին կարելի է վերագրել, «Ունայնության մագիլներ, հույսս տեսա՞ք, չկորավ»:

Առաջին գիրքը «Ռ՝վ եմ ես», արարված է որպես նվիրում հեղինակի մեծ սիրուն, «Առանց քեզ, սերս, ես չլավ է չապրեմ... // Գոգիչ շշնջաց ապրիտ, որ ապրեմ» բնաբանով: Եվ կարոտի ու սիրո անկեղծ այդ երգը մերք վերածվում է ներքին խոսքի ու մենախոսության, մերք երկխոսության, մերք արցունքի ու մերք էլ՝ անմայն ճիչի հոգու անմեկին բրդիներով, այրական հոգու ճիչի, որ ժամանակ առ ժամանակ արտահայտվում է ինքնատիպ պատկերներով պարզ, տապալուրիչ, ապրված և ծնված իրական զգացմունքներից:

Գրքում հեղինակը տալիս է հստակ պատասխանը իր իսկ հարցի, որը ամենևին էլ ոչ պատահականորեն դարձել է խորագիրը ո՛վ է ինքը գրողը, մի դեպքում՝ «Ես ապրեցի իմ հողում ու ապրեցի որպես մարդ», մյուս դեպքում՝ աշխարհին նայելի դրսի ու ներսի այբերով զնահատելու այս դիտանկյունից ևս մերք մանկան անկեղծ հրճվանքով ու անհուն զարմանքով, մերք էլ այդ նույն աշխարհի կողմից շոյված, և բոլոր դեպքերում՝ ապրեցնելով հեղինակին ներքին մացրությունը. չէ՛ որ նա ծնվել, աշխարհ է եկել առավոտի պես: Անգամ մի պահ՝ հուսահատության զգալի անկեղծ, հեղինակը կորցնում է հավատն առ մարդը առհասարակ, ուրախություն է տեսնում, զուտ պարզ, մարդկային մի ցանկություն այբերի լացից աղամանդներ հանող մի ձեռք է տեսնում, որն իհարկե ունի կոնկրետ հասցեատեղ: Ու մեկ էլ թե՛ «Եվ մեր զամբյուղը մեր ձեռքով գործենք»: «Ես քեզ լույս կնվիրեմ... // Որ մթնում չխարխափես»: Ի՞նչ կարելի է ընծայել մեծ սիրուն, եթե ոչ Լույս, Լույս անաղարտ:

Ժողովածուում տեղ է գտել նաև պոեմ իրապատու հենքով, բնականաբար ու տրամաբանորեն կրկին ընծա մեծ սիրուն, և

իրոն խորին խոնարհում նրա հիշատակի առջև: Եվ սիրո յուրատեսակ, անըստյուտ պատումն է հյուսում գրողը սպասումով, որը «մաշկի տակ լցված ճիչ է մրջյունու» զտնված պատկերով մտահոսքում:

Ու մեկ էլ սեփական ներքին երկու ես-ի պայքարի մասին է խոսքը անպայման առաջ մղելով հայ լինելու համագամաքը, և ի վերջո հաշտեցման լայնահուն ուղին են բռնում երկուսն էլ, սակայն միայն իրենց «բնակարան-ամանը կտորելու» արդյունքում:

Գիրքը եռաշարք է, ամբողջությամբ գրողի սիրո մասին: Եվ «Սիրով» շարքը բնծայում-արարումներ են սիրելիներին, ինքնատիպ ժամանակի անկանգ սլացքին զուգահեռ ծնվող բանաստեղծություններ: Իսկ «Ռ՝վ եմ ես» հարցով նա ինքնաբացահայտման ուղով է տանում ընթերցողին նաև: Թվում է՝ ամբողջ ժողովածուն մեկ ավարտուն պոեմ է, որտեղ հանգիստ հանգրվանած ջահել սերը այդպես էլ չի ծերանում, ու այդպես էլ պատանի սրտերը մնում են կապված երանելի ժամանակներին հազարավոր քելեբով: Անգամ այս զգացողությունը ոչ միայն ներըմբռնողական է, այլև բառային և մտքի կրկնությունների միջոցով ստեղծվում է նրա ինքնատիպ պատկերը:

«Ի՞նչ ես փնտրում ինքդ քո մեջ, ավետարան» // Երբ մարդս զուրկ ու անզոր է իր կամքի պես»: Բառացիորեն վերջին երկու օրերին ընթերցողի սեղանին դրվեց բանաստեղծի նոր «Քանի դեռ ես կամ» ժողովածուն ինքնատիպ ծաղկացաղը անտիպ բանաստեղծություններից քեմատիկ լայն ընդգրկմամբ: Ժողովածուն կրկին շարքերով է և գերակշռող գրողի սեփական հոգևոր պրիզմայով քելվող-անցկացվող գործերն են համապատասխան ենթախորագրերին: Բայցված լինելով կյանքի ու մահվան սահմանագծին նա վերադառնում է արարելու, քանզի մահվան գիծը կորցրածի համար անգամ, իր խոսքերով, որը երկինքը ծոցում պահած փոքրիկ ու խոսուն ծաղիկն է աղոթում իր այսերկրային գոյի հավերժության սուվերի առջև չվարանելու

համար:

«Եթե երբևէ դու մեռնակ մնաս, // Փակիր կոպերդ վարագույրի պես, // Ոչ որի չասես, թե ինչ ես գուժում, // Կոպիդ տակ լո՛րն ինչե՛ր են հառնում: // Բանզի դա միայն քեզ է հարկավոր, // Մեկ էլ՝ արևին»: Գոգու ներսային այնպիսի անկեղծումներ են, որ կարելի է հանդարտիկ վարագուրել, իսկ այն, ինչ կմնա, սեփականն է խոր-խորախորհուրդ: «Ու չենք էլ խորհում... // Որ ծնվում ենք մենք այգաբացի հետ // Առաջին ճիչը խեղդելով մեր մեջ: // Եվ ամբողջ օրը քիթեռնիկի խաղ, // Ու ընդունում ենք այն, ինչպես որ կա»: «Լուսամուտից դուրս // քիթեռնի կյանքն է օդում քնածուռ»: Բազում անգամներ կրկնված ասես աֆորիզմի ուժ ստացած «մարդու կյանք-քիթեռնի կյանք» արտահայտությանը բանաստեղծը գործերում անդրադառնում է նրանակատրոն, առանց չափազանցումների: Այդպես և ցավի նկարագրությունը՝ «Ցա՛վն էլ է զմվում» հոնտորական հարցադրումով: Կյանքի ու ապրված իրականության տողեր են խոհական մտեցմամբ, պատուհի գեղեցիկ ոճով: Եվ մի՛թե այդ նույն մտքի տրամաբանական շարունակությունը չէ, թե «Ուշ ոչինչ չկա... // Ապրելու տեսնել միշտ կա // Ու միշտ կա...»:

Պատկերները գեղեցիկ են. «Արծազանքի՛ր ինքդ քեզ, արծազանքի՛ր, // Այնպես ծայրի, որ ծորերդ դմբդմբան, // Զ՛է՛ որ ծայրը ազատությանն է հարիր, // Գոգու՛ր քն՝ տուր, կյանքն է տեղով քառ ու բան»: Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում ժողովածուի «Մարմինս» շարքը, մերք ընդ մերք դիմելով հարազատ շիրախյան բառուբանին՝ գրողը ապահովում է կողորհտային հնչեղությունը, խոսքի համն ու հուտը: «...Ամեն առավոտ իմ այգաբացին ես եմ քարևում // Ու փշրվում եմ ապակու նման նրա ոտքի տակ, // Զ՛է՛ որ նրանից միշտ սեր է կաթում, // Զ՛ն էլ մտածում // Կանաչ խոտի պես կրկնեն ոտնատակ»:

Կարինե ՄԱՐՏԻՐՈՅԱՆ
Բան. գիտ. քեկն., դոցենտ

ԽՈՐՀՐԴԱՎՈՐ ԶՈՒՅՁԸ

Քրիստո-ժան Կլոդ

Ծագումով բուլղարացի, Ֆրանսիայում իր ուղին գտած, Ամերիկայի քաղաքացի խրիստո-վյադիմիրի Յավաշևը ՔՐԻՍՏՈՆ, 20-րդ դարի երկրորդ կեսի և 21-րդի դարասկզբի «ամենա, ամենա» արվեստագետներից է:

Ամենամոտմենտալ, ամենահինգնատիվ, ամենաանսպասելի, ամենահեծաբորբի, ամենաարվածախնդիր և միաժամանակ ամենասկզբունքային, ամենախստիկ, ամենամանաչելի, ամենահիմունքակառույց, ամենախորհրդավոր...

Ամենա-ների շարքը երկար կարելի է շարունակել հիմնավորելով ու մեկնաբանելով:

Թերթի սեղմ շրջանակներում փորձենք ուրվագծել Քրիստո արվեստագետի դիմապատկերը:

Ծնվել է Բուլղարիայի հունորի մայրաքաղաք Պլովնոյում, որի բնակիչները հայտնի էին կյանքի նկատմամբ յուրօրինակ վերաբերմունքով և առասպելական ժառանգությամբ: Հավանաբար այդ միջավայրը հետք է թողել Քրիստո արվեստագետի ոչ ստանդարտ մտածելակերպի և գեղարվեստական զուսպ արտահայտչականության վրա: Քրիստոն սկսել է նկարել վաղ հասակից: Նրա պատանեկան տարիների գծանկարները զարմացնում են իրենց ճշգրտությամբ ու տեխնիկական կատարելությամբ: Եվ մի հետաքրքիր դրվագ նկարչի կյանքի բուլղարական շրջանից: Սոֆիայի գեղարվեստի ակադեմիայում սովորելու ընթացքում Յավաշևին այլ ուսանողների հետ որպես ամառային պրակտիկա գործուղում են նկարելու «Պոստիմպրեսիոնիզմի գլուխներ»:

1950-ականների սկզբներին Բուլղարիայի տարածքով էր անցնում Փարիզ-Մոսկովյան «Արևելյան էքսպրես» կոչվող երկաթուղու մի հատվածը: Կոմունիստական քարոզչական մեքենան խնդիր էր դրել զուսպարդելու երկրում այն ժամանակ տիրող գորշ սոցիալականությունը, և նկարիչները պետք է «վերափոխեին» գնացքի պատուհաններից երևացող բնականայնորի պատկերները:

Երիտասարդ Քրիստոն, ընկալելով կուլեկտիվ աշխատանքի ներդրում, բաց տարածքում աշխատելու մոնումենտալ ոգին, միաժամանակ ներքուստ հաստատում է իր վերջնական խզումը կոմունիստական Բուլղարիայում առկա պարետիկ կեղծիքից...

Մինչդեռ Քրիստոյի գնացքը պետք է գնար այլ արևմտյան ուղիով:

Նա իր կյանքի քախտորոշ ցատկը կատարում է 1956 թ. -ին հայտնվելով Պրահայում, այստեղից էլ կնքված ապրանքատար վազոնով գաղտնի հատում է ավստրիական սահմանը: Վիեննա, ժնև, Փարիզ տարագիր կյանքի դասական դժվարություններ, լեզվական խնդիրներ և բոհեմական միջավայրի աստիճանական յուրացում: Հանգրվանելով Փարիզում Քրիստոն ապրուստի համար վերցնում է դիմանկարի պատվերներ: Բարձրաշխարհիկ մի տիկնոջ դիմանկարի սեռնափ ժամանակ էլ ծանոթանում է նրա աղջկա ժան Կլոդի հետ, որ դառնալու էր Քրիստոյի կինը, համախոհն ու համահեղինակը: Խորհրդավոր զուգարկություններ նրանք երկուսն էլ ծնվել էին նույն տարում, նույն օրը՝ 1935թ. հունիսի 13-ին:

Հիրավի, վիթխարի են նրանց անցած ստեղծագործական ուղու թե՛ ծավալները, թե՛ ընդգրկումները: Դրանց մասշտաբները պատկերացնելու համար բավական է նշել, որ միայն Գերմանիայի պառլամենտի շենքը Ռայխստազը, «Վիաքաբելու» թույլտվության համար ստիպված են եղել սպասել շուրջ 23 տարի: Դրանք հույսի ու հիասթափությունների, լարված անվերջ բանակցությունների տարիներ էին, իսկ նախագիծը իրականացնելու համար պահանջվել են 7 միլիոն եվրո, տասնյակ հազարավոր մետրերով հատուկ սինթետիկ կտոր ու պարաներ, հսկայական տեխնիկա, նկարահանումներ, իհարկե, հարյուրավոր աշխատողներ ու կամավորներ:

Քրիստո-ժան Կլոդ ստեղծագործական զույգն ուներ աշխատանքի հստակ բաժանում: Գաղափարի իրականացման ստրատեգիան մշակում էին երկուսով: Քրիստոն կատարում էր նախագծի visualisation-ը, այսինքն այն տեսանկյունից, որով հարմար էր քաղաքի վերածախմը:

Քրիստոյի ստեղծագործական աշխատանքը վերջնականապես ձևավորվում է 1960-ականների սկզբին Միացյալ Նահանգներ Նյու Յորք տեղափոխվելուց հետո: Տարիների ընթացքում Քրիստոյի և ժան Կլոդի աշխատանքների տարածական ծավալումները հասնում են հսկայական չափերի և մոլորակային ընդգր-



առաջնահերթ էր անձնական ու ստեղծագործական ազատության գործունե բոլոր պարագաներում: Նախագծերն իրականացնելու գործնական և բանակցային խնդիրների լուծման հիմնական մեթոդները անվերջ ժան Կլոդի ուսերին էր:

Կարճ անդրադարձ Քրիստոյի անցած ստեղծագործական ուղու: Արդեն Փարիզում նա հրաժարվում է հաստոցային գեղանկարչությունից կենտրոնանալով փոքր և միջին չափերի օբյեկտներով, հիմնականում մետաղյա տարրերով ու դատարկ տակառներով ինստալացիաների վրա: Այնուհետև աստիճանաբար սկսվում է տարատեսակ նյութերով տարբեր առարկաներ փաթաթելու «emballage» շրջանը մանկաստանից, ծաղկեփնջերից, շշերից մինչև հարյուրավոր ծառեր ու կիլոմետրեր ձգվող լողափներ:

Ճեղքումը տեղի ունեցավ, երբ Փարիզի Վիսկոնտի նեղլիկ փողոցը զույգը մի քանի ժամով դատարկ մետաղյա տակառներով արգելափակեց: Այն բողոքի ակցիա էր ուղղված Բեռլինի պատի շինարարության դեմ:

Քրիստոյի ստեղծագործական աշխատանքը վերջնականապես ձևավորվում է 1960-ականների սկզբին Միացյալ Նահանգներ Նյու Յորք տեղափոխվելուց հետո: Տարիների ընթացքում Քրիստոյի և ժան Կլոդի աշխատանքների տարածական ծավալումները հասնում են հսկայական չափերի և մոլորակային ընդգր-

ծագործական իրականացումները ունեն ժամանակային սահմանափակումներ, առնվազն 2-3 շաբաթ տևողությամբ էին, այնուհետև դրանք ապամոնտաժվում էին մնալով միայն որպես ֆոտո և տեսաավերագրություններ ու նկարագրություններ: Այստեղ նրանք մարտահրավեր են նետում «արվեստի անմահության» մասին պատկերացումներին: «Առհավետ չբանալու համար հավանաբար անհրաժեշտ է ոչ պակաս քաջություն, քան մնալու համար», - ասում է Քրիստոն: Խորաքափանց դիտող նրա գործերում կնկատի իմաստասիրական խնդիրների արժարժույթներ, օրինակ, Ներսի ու դրսի հիմնահարցը: Օբյեկտներն ու շինություններն արտաքինից փաթաթելուց զատ՝ Քրիստոն ունի գործեր, որոնց ներքին ծավալների հորինվածքները կազմակերպված են տարբեր նյութերով, լինի քանգարանի շենքի ինտերիեր թե՛ աշխարհի ամենամեծ գազի պահուստարան:

Ժան Կլոդի մահից հետո /2009թ./ Քրիստոն իր ուղին շարունակեց միայնակ ավարտին հասցնելով որոշ նախագծեր, միաժամանակ կենտրոնանալով այլոց վրա, ինչպես Արաբական անապատում նավթի հարյուրհազարավոր քաղաքային տակառներից կառուցվելիք հսկայական օբյեկտը Mastaba-ն, որ պիտի արժենար 340 միլիոն դոլար: Իրականանալու դեպքում այն դառնալու էր աշխարհի ամենամեծ ու ամենաքանկ մոնումենտը: Այուրեք Փարիզի Աստղի հրապարակի նշանակալի Դադարկամարն էր Arc de triomphe:

Հաղթականաբար փաթաթվեց 2021թ. սեպտեմբերին առանց վարպետի, բայց նրա թողած մանրամասն ցուցումներով ու էսքիզներով: Քրիստոն հրաժեշտ տվեց երկարամյա կյանքին 2020թ. մայիսին, 85 տարեկանում Նյու Յորքում: Եվ այսպես շրջանը փակվեց Հաղթականարի խորհրդանշական փաթաթումով, այն Հաղթականարի, որ նրա փարիզյան կյանքի առաջին օրերին երևում էր ծեղկահարկի տակ վարձած աղբատիկ սենյակի պատուհանից...

ՀԱՇՎ (Վազգեն Դախլալյան-Թադևոսյան)

ԿԱՐԵՆ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ ԶԱՐԵՆՑԻՆ

Դու քո օրերում երազեցիր Նաիրի երկրից լույս ապագան, ու որպես դրոշ քեզ պարզեցիր, որ քո հետքերով սերունդներ գան, Ելիր, հիմա տես անկումը մեր եվ մեր հայ ոգու մթազմումը, Լորից հնչեցրու հույսի երգեր, որ չկործանի մեզ սամուը, ու տես պատմության մեր այս փուլում Որքան ենք զգում քո կարիքը, Արթնացիր, Զարենց, քեզ է կանչում Նաիրյան քո սուրբ հայրենիքը...

13.03.2021

ԱՐԱԳԻԼ

Շտապել է արագիլը, եկել-կանգնել բնին, Լոր շյուղեր է ուզում բերել, ավելացնել հնին, Իր կիսավեր բնին է նա նայում

մանրագին, որ տաք օջախ պիտի դառնա իր մրսած մարմնին: Եվ նոր հույսով կանգնած է նա իր հարազատ բնին, Հաշվարկում է շինանյութը հատ-հատ՝ մանրագին, ու հասկանում, որ չնայած նոր արժեքին, գնին, Պիտի հենվել, ապավինել ավանդական հնին...

11.03.2021

ՀԱՅ ՍԱՅՐԻԿԻՆ

Դու հայ օջախի թոնիրն ես վառման, Եվ իրենչտակը աստվածամկեր, Լուսապսակը Աստծո արարման, Քո տեսքով Տեղը պիտի հայտնվեր: Դու զավակներից պահապանն ես լուռ Ու անմեկնելի սիրո աղբյուրը, Նրանց առաջին բաց արած մի դուռ, Նրանց հովանին ու ձեռքի սուրը: Դու կարիք միջով սիրո

սերմանում, ու աղբյուրայի շշունջ-աղբյուր ես, Իսկ երբ զավակիդ զինվոր են տանում, Ուխտավոր դարձած արյունոտ ոտք ես: Դու միշտ քո որդու ճամփին սպասող, Գիշերվա կեսին վառման ճրագ ես, Իսկ թե զավակիդ կա չարախոսող, Դու միանգամից պայթող կրակ ես: Զավակիդ համար պահած ապուր ես, Զննադատումը ու խորհուրդը խիստ, Որդուդ հետևից շարված ջուր ես, որ ուղին անցնի անփորձանք, հանգիստ: Դու քնած որդուդ մեքքը փակողն ես, Դու պահապանն ես զզոն, մշտաբթուն, Անառակ որդու դուռը թակողն ես, Եվ աղաչողն ես, որ որդիդ

զար տուն: Դու քո զավակի օրոր ասողն ես, ու խաղընկերն ես, մայրիկ՝ սիրո ծով, Աստծուն մեզ համար բարեխոսողն ես, Մենք մեծանում ենք քո շնորհածով...

08.03.2021

ՔԱՈՅԱԿՆԵՐ

Մառախուղ է շուրջը իմ, Խաղ է կարծես լուրջը իմ, Ինչքան շաքար էլ ածեմ, Դառն է դարձել սուրբ իմ:

Մոտենում է կես դարս, Ալտրվում է սարս, Ինչ հիշատակ էլ թողնեմ, Մնալու է լուռ քարս:

Մեր գլխին ես ինչ բերին, էլ դազաղներ, էլ գերի, ու տակալին պարզականար Բարձրանում են բեմերին:

Ուր գնամ, մայրս չկա, Արև-անձայրս չկա, Փնտրում եմ ես գլխիկոր՝ Մայրիկ-աշխարհս չկա:

Ում ներքեցի՝ չներեց, Ում տվեցի՝ չբերեց, Ի պատասխան ամենքին Իմ խեղճ հոգին համբերեց:

Տեսել եմ ես իմ չափով, Ջուր եմ խմել իմ ափով, Սովորել եմ այս կյանքի Հարվածների տարափով:

Ինչ էլ անեմ, անգոր եմ, Ցույց եմ տալիս՝ հզոր եմ, Հնանում եմ օր օրի, Խաբկանք է, թե միշտ նոր եմ:

ԱՐԵՎԱՏԱՀԱՅԵՐԵՆ ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹՅՈՒՆ



ՀՐԱՆԴ ՍԱՐԳՍԻԱՆ

(Եջին վրայ կը վերածուի նշանագրի) պլա պլա պու պի պու պա պլի պա վեր վեր վար վեր վար վար վեր վար ատկե անդին կը սիրերգե՞ յղացք մը որ բաց է ամբողջ ամբողջովին եւ յոտնկայս բան կը բանայ կամ կը բանէ տարբերակներ խոր ծայնային խորհրդաւոր անլուծելի ստեղծող ի՞նչ

տաղ տաղերգող ի՞նչ կաքաւիկ մատ մատ մատնող ներքին խռովք տա մ քեզ նուր մտիր ներքին հիւսկէններուն վարար ծայնին ձգտումներու միտումներու այս խառնուրդին բացութեան մէջ ազատարար շնչէ ազատ

տար տառեր վառ խըլ կամ խլուած բաց երախն մութ տարրերքին տորոն որդան կարմիր այրող կամ բռնկած լեզուին վրայ այրող գօտի (լաւ այրեցեալ) տարաշխարհիկ պտուղներու կեղեւներուն մէջ փաթեցուած փնտռող իմաստը բառերուն անհեթեթին մէջ այս հսկայ կապող հնչիւնը բառին հետ կամ մէկ այլ տարրեր համաձայնական հասկացողութեան տաղ շրջուած տ ա ր տ ղ ն ու ա ծ լեզուին նման գայն գործածող մարդոց տակաւ անդիմացող

հուր հոն հոսող իրմէ քեզի ծայնէն եկող հին կախարդանք յուռուքք հմայեակ լեզու որ քեզ դեռ կ'աքսորէ այլուրային տեղ մե եզրին որմէ անդին մղծաւանջն է կորուստներու

անցում լեզուի մը շատ տարբեր շրջապատէն անհասկնալի կամ հասկնալի որու փշածածկ շրջագծին մէջ մէկ այլ օտարում կը սպասէ քեզի

յիշատակդ այս գիշեր ոչ մէկ ձեւով կը յուզէ կարծես ջնջուած ես մտքես ոչ մէկ ատեն դուն կայիր

բառ բռնաբարուած բռնի թխմուած կոկորդ ի վար

բայց սէր քեզ կ'երգեմ այդքան համարձակ աներեսօրէն կ'երփնդկուիմ քեզի հետ կը հասունամ եւ կը հասնիմ քեզի հետ հետ յետ քեզի հետք անհետք յատակագծի ան նշան

կը ջրվիժի ծայնը շարունակ թքած բոլոր եւ բոլորի կարծիքներուն

իր հարագատ տաղը կ'երգէ կամ կը փնտռէ միշտ անծկութեան սահմաններուն ուր պրկումը կրնայ հասնիլ փրթելու կամ կտրուելու աստիճանին լեզուի մը պէս բզկտուած

բայց ձգալստ են բառերը հնչիւնները ծիգ ու իրաւ կապող բռնող համբոյրի պէս եւ բռնկող բերնէ բերան

տարբերակներ գորս շրջումին հետ պէտք է ընտրես

ահա կը մտնես ձեռներեցօրէն ծայններեցօրէն ծայնաթելերով հիւսուած բողբոջ տակ ծիածանող քեզ ծին ծնծիղ ծնծղայ



ՎԱՐՍԱ ԶԱՆՈՅԵԱՆ

ՀԻՄՆԱՅԻՆ ՊՈՂՈՏԱՅ

Բաժակ մը ջուր սիկարեք մը գաւաք մը սուրճ

կէս ժամ յետոյ

Ժամ մը, երկու սիկարեքներ տաս սիկարեք և նոյն ջուրը և նոյն սուրճը աժան հաճոյք բանկ «կաֆեյում» «մէսիջ» ու «տեքստ» iPhone-7-ը բարձր բռնած որ երևնայ զբաղ զբաղ գործի վրայ հեռախօսագանգեր զբաղ ու սիկարեք արդէն քսան նոյն բաժակը ու նոյն սուրճը

Համոն անցաւ Արփին անցաւ Ավոն անցաւ Արմանն անցաւ Այտան անցաւ Անին անցաւ Լիանան անցաւ Ավոն Նորից անցաւ Համոն էլ...

ո՞վ ինձ տեսաւ բանկ «կաֆեյում»

Մոխրամանն է որ կը յորդի

զլանիկի ծայրերով բայց իր սիրտը դեռ չի յորդիր իր սրտմաշուք խաթկանքով

Պառաւ մութացկանը ձերքն կ'երկարէ մայրէն երևելի աներևոյ յը

Վերջին հաշուով հոս նստիլն է կարևոր տեսնուիլն է մայրքին այս կողմ և ոչ այն կողմ ու հաւատալ ու ձևացնել

բոլորն անցան և վերջապէս օրը անցաւ...



ՆՈՐԱ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ԿԸ ԳՐՈՒԻ

յորդեալ հեղուկ մոխրագոյն չարաբոյր հոսուկ բանձրացած սիրոյ ամանէն ինկած աւելորդութիւն որուն չի կրնար այլեւս մարմինը տոկալ կը գրուի ... կը գրուի անկապ անորոշ սողանցքներէն երակի բացին վրայ չքանալիք մէկ պահի որ հեռու է հասկցուելու ճաշակէն

ո՞ր է ո՞ր է իմաստը եւ թոյրը գոր ծայրերով մատներուն

դիտեցինք օր մը ու տեսանք անկէ ծորող լուսափոշին մեր ծոցին մեկանի պէս ջնջուելիք կու գայ դարձեալ խաթելու լեցուելիք ճերմակութիւնն մեր աղջեւ

որ ոչ մէկուն հոգիին մէջ տեղ ունի խամրելիք արդէն իսկ խամրած յոյսէն թխած տմարդութիւն դեռ կառչած ենք պարապութեան ու կը լսենք միայն աղմուկ միայն թշուառ ավստասնք ու տակաւին անլոջութեամբ միամիտ գայն կը քշենք մանուկի պէս աճելիք մեր անցնելիք ճամբայէն

կը քրտնի երզը մեր մորթէն կը շոգիանայ դէպի վեր մեզ կապելու մեզմէ անդին գտնուողին ու կանգնելու չիասկցուած մեր անձին դէմ միս-մինակ



ՍԱՐՈՒՇ ԵՐԱՍԵԱՆ

ՍԱՐԴԸ ԶԻԹԻՆ ՍՓԻՆՔՍԻՆ

ուղտեր միայն անփոփոխ վրանները լարեցինք անոնց շուքին երջանկացանք յետոյ մէկ տաղեր ըսաւ երջանկութիւնը խաթարեց

իսկ տաղերը լուացքի պէս բամբասանքի թելերէն կախ ճօճուեցան

...

առանձնութեան օրհնութիւնը տենչացող աւազին դէմ լուսփոխը կը ջախջախուէր իմաստներէն պարպուած եկան իրենց անօրութեամբ «ամբոխները խելագար» կոյր սկիզբէն քշուած անդեկ մորթութեան բզկտեցին յետոյ գիտլով հոռոպցին նկարուեցան ճի՛շդ այն պահուն երբ ամէն բան կը փոշիանար յետոյ գտան իրենց նման կենդանի մը եւ մորթեցին իրենց արիւնը արիւնով լուալու

...

հեռուն տեղ մը Սփինքսը դեռ կը խոկայ քիթը կոտրած եւ անօգուտ

մինչ ամբոխներ ճանճերու պէս կ'ապականեն անեզրութիւնը անհունին կը սահին վար ժամացոյցին կողերէն աւազներուն կը մոռցուին ու կը մնան յաւիտեան իսկ բուրգերը կը պարպուին ու կը լեցուին խառնիճաղանճ աղմուկով կեանքի իմաստ միսիարանք եւ մարդէ մարդ ի զուր գացող քունտո նետեր որսալով:

ԿՈՒ ԳԱՍ

Կու գամ Շշուկով Սպասումիդ աւարտը երգելու Կու գամ

Պահերուդ քաղցրութիւնը հիւսելու Կու գամ

Յուշերու պսակը գլխուս Նոր յուշերու արահետներ բանալու Կու գամ

Որ աչքերուս մէջ Երագներդ վերթեւեն Կու գամ

Հոգուս մերկութեամբ Որ աշխարհներս զարդարես Կու գամ

Բնութեան մեղկութեամբ Որ բառերդ հրայրքով պարուրուիմ Կու գամ

Որ քնքշօրէն պահերս յորինես Կու գամ

Որ աշխարհները Երամներու պէս ճախրին Հոն՝

Ուր միայն ես կամ եւ Դուն...



ՅԱՐՈՒԹԻՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

Դ Ա Տ

երգ կ'երգէ բնմին վրայ որդեգրելով լեզու մը որ հասկնալի է բոլորէն գէթ առաջին մակարդակին

Հրատարակված է ՀՀ ԿԳՄՍ նախարարության աջակցությամբ: